ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՏԵՐ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

17.06.2021 05:42

Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է **երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով** նախատեսված աշխատասենյակից՝ 2021 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում օգտվելու համար **հայտեր** ներկայացնելու ժամանակահատված:

Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են մինչև հունիսի 29-ը ներառյալ: Հայտերը կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am էլ. հասցեին, ինչպես նաև կարող են ներկայացվել յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

Ծրագրով սահմանված պահանջներին համապատասխանող հավակնորդների հետ կանցկացվի հարցազրույց: Հարցազրույցը տեղի կունենա 2021 թվականի հունիսի 30-ին ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

Ծանուցում

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի իրականացումն ուղղված է երիտասարդ փաստաբանների մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին աջակցելուն:

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կողմից ընտրված փաստաբանները հնարավորություն կստանան իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնել ք. Երևան, Զաքիյան 2, 2-րդ հարկ, թիվ 9 սենյակ հասցեում գտնվող աշխատասենյակում, որը տրամադրվելու է անվճար:

Միևնույն ժամանակ, հասարակությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով, աշխատասենյակն օգտագործելու ժամակահատվածում, յուրաքանչյուր շահառու կիսամյակի ընթացքում պետք է հանրային պաշտպանի գրասենյակի առաջարկով անվճար իրավաբանական օգնություն տրամադրի քաղաքացիներին՝ ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կողմից հաստատված ընթացակարգով սահմանված կարգով և քանակով:

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունն կարող եք ստանալ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված **Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրից** և ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի 21.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված **աշխատասենյակից օգտվելու ընթացակարգից**:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատ

Բեռնել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը

Բեռնել Աշխատասենյակից օգտվելու ընթացակարգը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })